«ՏՈՏԱԼ ԱՐՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
“TOTAL ART” CULTURAL NGO

«ԹԵՍՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
“TEST” CHARITABLE FOUNDATION

Joint exhibition of young artists and creators from Stepanavan and Yerevan, 2010

Ստեփանավանի և Երևանի երիտասարդ նկարիչների երիտասարդ ստեղծագործողների համատեղ ցուցահանդես, 2010թ.





Youth Art Competition-Exhibition, Yerevan Municipality 2007 (Total Art, Arev Art Gallery)

Երիտասարդական գեղարվեստական մրցույթ-ցուցահանդես, Երևանի քաղաքապետարան 2007 (Total Art, Arev Art Gallery)





Transcaucasian Art Festival (Armenia, Georgia, Azerbaijan), 2003-2007

Անդրկովկասյան արվեստի փառատոն (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան), 2003-2007թթ.


















სასტუმრო
მერკური
HOTEL
MERCURY






ART
ᲙᲐᲕᲙᲐᲡᲘᲐ ᲩᲕᲔᲜᲘ ᲡᲐᲮᲚᲘᲐ
















# Joint international exhibitions, Total Art and Arev Art Gallery, 2004-2007
# Համատեղ միջազգային ցուցահանդեսներ, Total Art and Arev Art Gallery, 2004-2007թթ.















Venice World Biennale, curator and organizer of the youth pavilion Total Art, 2009

Վենետիկի համաշխարհային բիենալե, Total Art երիտասարդական տաղավարի կուրատոր և կազմակերպիչ, 2009թ.





Exhibition of Armenian artists from around the world, dedicated to the Armenian Genocide, organized by Total Art, Ministery of Diaspora of RA, Yerevan Municipality, 2010

Աշխարհի տարբեր երկրների հայ նկարիչների ցուցահանդես՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը, որը կազմակերպվել է ՀՀ սփյուռքի նախարարության, Երևանի քաղաքապետարանի և Total Art-ի կողմից, 2010թ.










# Youth exhibition in Moscow House, Yerevan 2010
# Երիտասարդական ցուցահանդես Մոսկվայի տանը, Երևան 2010թ.





Opening of the Moscow Alley - designer and curator Anna Harutyunyan (Total Art) – where together with the municipality shows, concerts, exhibitions, shows were organized, with participation of Children's Center of Disabled "Kamurj", 2004

Մոսկվայի ծառուղու բացում - դիզայներ և վարող Աննա Հարությունյան, որտեղ քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպվել են շոուներ, համերգներ, ցուցահանդեսներ, ցուցադրություններ, «Կամուրջ» հաշմանդամների մանկական կենտրոնի սաների մասնակցությամբ, 2004թ.
















Exhibition "Meeting with Ararat", which participated Armenian and Asian artists (40 person). Organaizers Henrik Igityan, Total Art, Modern Art Museum, Yerevan 2007
Ցուցահանդես «Հանդիպում Արարատի հետ», որին մասնակցում էին հայ և ասիական նկարիչներ (40 հոգի)։ Կազմակերպիչներ՝ Հենրի Իգիթյան, Total Art, Ժամանակակից արվեստի թանգարան, Երևան 2007թ.













"Karabakh-Armenia" - The first youth art symposium and international exhibition in Stepanakert, in the presence of the Minister of Culture of Artsakh and the President of the Union of Artists, 2009

«Ղարաբաղ-Հայաստան» առաջին երիտասարդական գեղարվեստական սիմպոզիումը և միջազգային ցուցահանդեսը Ստեփանակերտում, Արցախի Մշակույթի նախարարի և Գրողների Միության նախագահի ներկայությամբ, 2009թ.

Pavilion presentation at the Union of Artists after the Venice Biennale, 2010
Տաղավարի շնորհանդես Նկարիչների Միությունում Վենետիկի բիենալեից հետո, Art Expo, 2010թ.









New York Art bienalle, with P. Franesi, 2015

Նյու Յորքի արվեստի բիենալե,
Պ. Ֆրանեսի, 2015թ.,









New York Art Biennial Exhibition, Modern Art Museum, Yerevan 2015
Նյու Յորքի արվեստի բիենալեի ցուցահանդես, Ժամանակակից արվեստի թանգարան, Երևան 2015թ.













SOLO EXHIBITION
Anna Harutyunyan
"And Life started
Curated
by














Republican youth exhibition, Union of Artists, Total Art, 2008
Հանրապետական երիտասարդական ցուցահանդես, Նկարիչների Միություն, Total Art, 2008թ.



# Beijing art biennale,
# Armenian pavilion, 2012
# Պեկինի արվեստի բիենալե, հայկական տաղավար, 2012


















Future and Reality
Human dreams for a bright future forever
Possible future based on the reality at the foot
2012 · 第五届中国北京国际美术双年展
The Fifth Beijing International Art Biennale, China 2012
研讨会

"Surb Sargis" youth exhibition, Union of Artists, Total Art, 2009

«Սուրբ Սարգիս» երիտասարդական ցուցահանդես, Նկարիչների Միություն, Total Art, 2009թ.



# Exhibition dedicated to the international day of March 8, Yerevan Municipility, 2010
# Ցուցահանդես՝ նվիրված Մարտի 8-ի միջազգային օրվան, Երևանի քաղաքապետարան, 2010թ.





Youth Exhibition at the UN, 2004

Երիտասարդական
ցուցահանդես ՄԱԿ-ում, 2004թ.





# Youth Exhibition in the National Assembly, 2005
# Երիտասարդական ցուցահանդես Ազգային ժողովում, 2005թ.



Art Expo, organized by Union of Artists, Total Art, Tbilisi, 2004

Art Expo, կազմակերպված Նկարիչների միության, Total Art-ի կողմից, Թբիլիսի, 2004թ.












“AKANAT ARTGALLERY”/ARMENIA





Shooting of historical-cultural film “Castle of Dashtadem”

«Դաշտադեմի Ամրոց» պատմամշակութային ֆիլմի նկարահանում, 2010թ.















Youth exhibition in the Museum of Stepan Shahumyan in Stepanavan, 2010

Երիտասարդական ցուցահանդես Ստեփանավանի Ստեփան Շահումյանի անվան թանգարանում, 2010թ.















2019/8/4 23:45



# Exhibition-Armenian Days in Switzerland, Locarno, 2011
# Ցուցահանդես՝ հայաստանյան օրեր Շվեյցարիայում՝ Լոկառնոյում, 2011թ.




Armenia
radici profonde


Armenia
radici profonde




Armenia

Իսպանիայի հայ համայնքի՝ «Արարատ» միության նախագահ
Անահիտ Օհանյանի նախաձեռնությամբ Աննա Հարությունյանի
ստեղծված «Հայկական կոշիկ, որը 5500 տարեկան է» կտավը
Հայաստանի Սփյուռքի նախարարության անունից նվիրվեց
Իսպանիայի Էլդա քաղաքում գտնվող թանգարանին՝ բարեգործական
ցուցահանդեսի շրջանակներում, 2016թ.




















“Transformation of Time Through Art”
April 26, 2019

«Ժամանակի փոխակերպումն արվեստների միջոցով» ցուցադրություն
26 ապրիլի, 2019թ.














Նպատակ ունենալով աջակցել հայկական կերպարվեստին՝ 1939 թ. Մարտիրոս Սարյանի և Գաբրիել Գյուրջյանի նախաձեռնությամբ հիմնադրվում է Նկարչական շրջիկ արվեստանոցը (այժմ՝ «Ցուցահանդեսային կենտրոն» ՊՈԱԿ): Հիմնադիրը և առաջին տնօրենը եղել է ՀՍՍՀ ժող. նկարիչ, պրոֆեսոր Գաբրիել Գյուրջյանը:

Գործունեության հիմնական նպատակներից էր՝ հայ արվեստագետների աշխատանքների գնումը մշակութային ֆոնդերի համալրման նպատակով, նկարիչների ապահովվումը նյութատեխնիկական միջոցներով, արշավների և ցուցահանդեսների կազմակերպումը Հայաստանի տարբեր շրջաններում, նախկին ԽՍՀՄ քաղաքներում և արտասահմանում: Սակայն 90-ականներին կենտրոնը հայտնի պատճառներով չէր զբաղվում իր բուն գործունեությամբ:

2006թ.-ից իրականացնում ենք «Թանգարան անիվների վրա» ծրագիրը, որը ՀՀ հեռավոր և սահմանամերձ մարզերի բնակչության՝ հատկապես երեխաներին ու երիտասարդությանը, անապահով սոցիալական խավերին հաղորդակից է դարձնում ՀՀ մշակութային ժառանգության մաս հանդիսացող թանգարանային հավաքածուներին /ցուցահանդեսները անվճար են/:

2006-2010թթ.-ին՝ «Թանգարան անիվների վրա» ծրագրի շրջանակներում 60-ից ավել ցուցահանդեսներ ենք կազմակերպել Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի, Սյունիքի, Արարատի մարզերի քաղաքների և գյուղերի մշակույթի օջախներում, դպրոցներում, որոնցից 15-ը՝ այս տարի:

Մեր կենտրոնի ակտիվ մշակութային գործունեությունը հնարավորություն է ստեղծում ծանոթանալու հայ արվեստագետների ստեղծագործությունների հետ:

Հայաստանի Ազգային Պատկերասրահի Մարտունու մասնաճյուղում «Սերունդներ» խորագիրը կրող ցուցահանդեսին, որը կազմակերպված է «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների շրջանակներում, մասնակցում են 15 երիտասարդ և 18 ավագ սերնդի նկարիչ և քանդակագործ, որոնցից յուրաքանչյուրի մոտ յուրովի է արտահայտվում ազգայինի զգացողությունը, չնայած հեղինակները առանձնանում են ոճային բազմազանությամբ, որն ավելի ակնառու է դառնում արվեստագետների ստեղծագործությունները միաժամանակ դիտելիս:

Այսպիսով, ներկայացվող ստեղծագործությունները հետաքրքիր են ոչ միայն իրենց ժամանակագրական առումով, այլև ֆորմալ ձևերով և բովանդակությամբ:

«Տոտալ-Արտ» Հ.Մ.Կ. -ի հետ համատեղ սա երկրորդ ցուցահանդեսն է և ես կարծում եմ, որ համագործակցությունը հաջողվել է:

«Ցուցահանդեսային կենտրոն»-ի տնօրեն Մ.Գրիգորյան

Ողջունում եմ այս ծրագիրը: Կարծում եմ հիանալի հեռանկար է ստեղծվում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում տարածելու և ճանաչելի դարձնելու երիտասարդ հայ ստեղծագործողների արվեստը, ինչպես նաև ստեղծելու կապ վերջիններիս և մարզերում ապրող ու ստեղծագործող արվեստագետների միջև:

Հուսով եմ այս նախաձեռնությունը կունենա տևական ընթացք:

Հարգանքներով և բարի մաղթանքներով՝ Աննա Հարությունյան
Նկարիչ, «Տոտալ-Արտ» Հ.Մ.Կ. նախագահ




Նպատակ ունենալով աջակցել հայկական կերպարվեստին՝ 1939 թ. Մարտիրոս Սարյանի և Գաբրիել Գյուրջյանի նախաձեռնությամբ հիմնադրվում է Նկարչական շրջիկ արվեստանոցը (այժմ՝ «Ցուցահանդեսային կենտրոն» ՊՈԱԿ): Հիմնադիրը և առաջին տնօրենը եղել է ՀՍՍՀ ժող. նկարիչ, պրոֆեսոր Գաբրիել Գյուրջյանը:

Գործունեության հիմնական նպատակներից էր՝ հայ արվեստագետների աշխատանքների գնումը մշակութային ֆոնդերի համալրման նպատակով, նկարիչների ապահովվումը նյութատեխնիկական միջոցներով, արշավների և ցուցահանդեսների կազմակերպումը Հայաստանի տարբեր շրջաններում, նախկին ԽՍՀՄ քաղաքներում և արտասահմանում:

Սակայն 90-ականներին կենտրոնը հայտնի պատճառներով չէր զբաղվում իր բուն գործունեությամբ:

2006թ.-ից իրականացնում ենք «Թանգարան անիվների վրա» ծրագիրը, որը ՀՀ հեռավոր և սահմանամերձ մարզերի բնակչության՝ հատկապես երեխաներին ու երիտասարդությանը, անապահով սոցիալական խավերին հաղորդակից է դարձնում ՀՀ մշակութային ժառանգության մաս հանդիսացող թանգարանային հավաքածուներին /ցուցահանդեսները անվճար են/:

2006-2009թթ.-ին՝ «Թանգարան անիվների վրա» ծրագրի շրջանակներում 45-ից ավել ցուցահանդեսներ ենք կազմակերպել Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի, Սյունիքի, Արարատի մարզերի քաղաքների և գյուղերի մշակույթի օջախներում, դպրոցներում:

Մեր կենտրոնի ակտիվ մշակութային գործունեությունը հնարավորություն է ստեղծում ծանոթանալու հայ արվեստագետների ստեղծագործությունների հետ:

Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնում կազմակերպված «Երիտասարդ ստեղծագործողներ» խորագիրը կրող ցուցահանդեսին մասնակցում են 15 երիտասարդ նկարիչ և քանդակագործ, որոնցից յուրաքանչյուրի մոտ յուրովի է արտահայտվում ազգայինի զգացողությունը, չնայած հեղինակները առանձնանում են ոճային բազմազանությամբ, որն էլ ավելի է ընդլայնում ցուցադրության գեղարվեստական սահմանները:: Այդ բազմազանությունը հատկապես ակնառու է դառնում արվեստագետների ստեղծագործությունները միաժամանակ դիտելիս: Կենտրոնի գործունեության գլխավոր արժանիքներից է այն, որ ներկայացվող աշխատանքները ցուցադրվում են մարզերում և այդ ստեղծագործությունների ակնդիրը կարող են դառնալ տարբեր բնակավայրերի արվեստասերներ, ովքեր կտրված են մայրաքաղաքի մշակութային իրարանցումից:

Այսպիսով, ներկայացվող ստեղծագործությունները հետաքրքիր են ոչ միայն իրենց ֆորմալ ձևերով, այլև բովանդակությամբ: Եվ այս բազմազանությունը համահունչ է ժամանակի նկարչական տենդենցներին, երբ առավել ազատ ֆորմալ լուծումները խոսուն են կերպարների խառնվածքի և ընդհանուր բովանդակության հետ:

«Ցուցահանդեսային կենտրոն»-ի տնօրեն Մ.Գրիգորյան

Ողջունում եմ այս ծրագիրը: Կարծում եմ հիանալի հեռանկար է ստեղծվում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում տարածելու և ճանաչելի դարձնելու երիտասարդ հայ ստեղծագործողների արվեստը, ինչպես նաև ստեղծելու կապ վերջիններիս և մարզերում ապրող ու ստեղծագործող արվեստագետների միջև:

Հույսով եմ այս նախաձեռնությունը կունենա տևական ընթացք:

Հարգանքներով և բարի մաղթանքներով՝ Աննա Հարությունյան

Նկարիչ, «Տոտալ-Արտ» Հ.Մ.Կ. նախագահ

**Դուք կարող եք նվիրաբերություն կատարել «ՏՈՏԱԼ ԱՐՏ» ՀՄԿ նախագծերի համար՝**
Բանկի անվանումը՝ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ
ՀՎՀՀ 0087217
h/h. 220483350348000 (ՀՀ դրամ)

**You can donate to the “Total Art” NGO's Projects:**
Our bank requisites:
Bank name: "ACBA-CREDIT AGRICOLE BANK" CJSC
Account number: 220483350348000 (AMD)

E-mail: totalartngo@gmail.com